

**Փաստարկված երիտասարդական քաղաքականության զարգացման  
սցենարների վերաբերյալ  
քաղաքականության դիրքորոշում**



**Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտ, հոկտեմբեր, 2018թ.**

Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտը որպես փաստարկված երիտասարդական քաղաքականությանն աջակցող և երաշխավորող հետազոտական կենտրոն, շարունակում է մշակել լուծումներ ներկայիս փոխակերպումների, օպտիմալացման գործընթացներում փաստերի և գիտելիքի վրա հիմնված պետական քաղաքականության սցենարների ներդրման ուղղությամբ:

**Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտի մասին**

Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտը՝ որպես անկախ հետազոտական կենտրոն, փաստարկված երիտասարդական քաղաքականությանն աջակցող և երաշխավորող մեխանիզմ է, ինչի ստեղծման համար 5 տարիների ընթացքում ներդրվել են ռեսուրսներ ինչպես պետական, այնպես էլ միջազգային աղբյուրներից: Ինստիտուտը ստեղծվել է ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի ֆինանսավորմամբ ՀՀ Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության «Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կազմում: Ինստիտուտը իրականացրել է մի շարք հետազոտություններ, որոնք հիմք են հանդիսացել երիտասարդական քաղաքականության մշակման համար, Ինստիտուտի անձնակազմը անցել է կարողությունների զարգացման երկարատև ճանապարհ, Ինստիտուտն ունի հասարակական և պետական ոլորտի ներկայացուցիչներից կազմված Խորհուրդ, Ինստիտուտը ձևավորել է տեղական և միջազգային կառույցների հետ համագործակցային ակտիվ ցանց:

Կառավարության կողմից երկրում այժմ ընթացող օպտիմալացման շրջանակներում ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության «Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի հնարավոր լուծարման հետևանքով Ինստիտուտի գործունեության շարունակությունը հնարավոր է մի շարք սցենարներով: Ներկայացնենք այդ սցենարներից երկուսը՝

**Սցենար 1. Որևէ բարձրագույն ուսումնական հաստատության շրջանակներում Ինստիտուտի գործունեության շարունակություն:**

Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտը կարող է մաս կազմել որևէ բարձրագույն ուսումնական հաստատության՝ դառնալով գիտահետազոտական կենտրոն՝ մասնագիտացված երեխաների, երիտասարդների, կրթության հարցերի գիտական ուսումնասիրություններով: Նշենք, որ մինչ այժմ նման գիտահետազոտական կենտրոն չկա Հայաստանում:

## Միջազգային փորձ

<p><a href="#">Երիտասարդական հետազոտության կենտրոն (Youth Research Centre)</a></p>	<p>Մելբուռնի համալսարան, Ավստրալիա</p>	<p>Երեխաների և երիտասարդների կյանքի ուսումնասիրություն՝ նրանց ուսումը, մասնակցությունը և բարեկեցությունը հասկանալու ու բարելավելու նպատակով: Ծրագրերը կենտրոնացած են վաղ տարիքից մինչև երիտասարդ տարիքը, երեխաների և երիտասարդների կարիքներին ծառայող հաստատությունների ու կազմակերպությունների վրա:</p>
<p><a href="#">Երեխաների և երիտասարդության հետազոտության ինստիտուտ (Child and Youth Research Institute (Cyri))</a></p>	<p>Վեց համալսարանների բազայով, Ֆինլանդիա</p>	<p>Կենտրոնի հետազոտողները՝ աշխատում են տարբեր ուղղություններով՝ բժշկություն, կրթություն, սոցիալական գիտությունների, հումանիտար գիտություններ, իրավաբանություն և տնտեսագիտություն</p>
<p><a href="#">Երիտասարդների զարգացման կիրառական հետազոտությունների ինստիտուտ (The Institute for Applied Research in Youth Development )</a></p>	<p>Լաբորատորիա, Թաֆթի համալսարանի Երեխայի ուսումնասիրության և մարդկային զարգացման Էլիոթ-Պիրսոն ֆակուլտետում, ԱՄՆ</p>	<p>Ինստիտուտը ունի մանդատ և նպատակ լինել տրամադրել և տարածել կրթաթոշակներ ուսանողների կրթական և մասնագիտական զարգացման համար, ովքեր հետաքրքրված են երեխաների, ընտանիքների և համայնքների կյանքի բարելավման գործում:</p>
<p><a href="#">Երիտասարդական զարգացման և հետազոտության կենտրոն (Center for Youth Development and Research)</a></p>	<p>Սփրինգֆիլդ քոլեջ (Springfield College), ԱՄՆ</p>	<p>Երիտասարդության զարգացման ուսումնասիրություն երիտասարդական սպորտային ծրագրերի իրականացման և գնահատման միջոցով</p>
<p><a href="#">Երիտասարդական հետազոտությունների և զարգացման կենտրոն (Centre for Youth Research and Development)</a></p>	<p>Մելնուֆ համալսարան, Իռլանդիա</p>	<p>Երիտասարդական ծրագրերի լոնգիտուդային հետազոտություններ</p>
<p><a href="#">Երիտասարդական ուսումնասիրությունների Մանչեսթերի կենտրոնը ((MCYS) The Manchester Centre for Youth Studies)</a></p>	<p>Մանչեսթեր Մետրոպոլիտեն համալսարան, Միացյալ Թագավորություն</p>	<p>Մասնակցային հետազոտություն, երիտասարդության համար արդարություն, քաղաքային երիտասարդության լեզուն, լեզուն և ինքնությունը, երիտասարդական հանցախմբեր և բռնություն, երիտասարդության պատմություն, երիտասարդության մշակույթ և ենթամշակույթներ, ստեղծագործություններ և պոեզիա</p>
<p><a href="#">Մանկության, երիտասարդության և ընտանիքի հետազոտության կենտրոն (Centre for Childhood, Youth and Family Research)</a></p>	<p>Յորքի համալսարան, Միացյալ Թագավորություն</p>	<p>Լայնարձակ հետազոտությունների միջոցով խորհրդատվության տրամադրում քաղաքականության մշակողներին և ծրագրերի իրականացնողներին: Երեխաների բարեկեցություն, պաշտպանություն, աղքատություն, ինամատարություն, սահմանափակ կարողություններով կամ առողջության հետ խնդիրներ ունեցող երեխաներ, խոցելի երիտասարդներ, երիտասարդներին հասցված վիրավորանքներ, անտուն երիտասարդներ:</p>

<p><a href="#">Մանկութան ու երիտասարդության շրջանում հետազոտության և նորարարության կենտրոն (Centre for Innovation and Research in Childhood and Youth)</a></p>	<p>Մասսեկսի համալսարանին անդամակցում, Միացյալ Թագավորություն</p>	<p>Մանկություն, &lt;&lt;Լավ Մանկություն&gt;&gt;, երեխաներ, էմոցիոնալ կյանք, թվային մանկություն մեթոդաբանական նորարարություններ</p>
--	--	--

## Սցենար 2. Անկախ հետազոտական կենտրոնի հիմնում

Ինստիտուտը կարող է շարունակել իր գործունեությունը որպես անկախ ուղեղային կենտրոն (think thank)՝ նպաստելով փաստարկված երիտասարդական քաղաքականության մշակմանը՝ իր գործունեության մեջ ներառելով ինչպես երիտասարդներին առնչվող հարցերը, այնպես էլ երեխաների և կրթության ոլորտները: Նման ձևաչափով Ինստիտուտը կարող է իրականացնել երեխաներին և երիտասարդներին վերաբերող պետական քաղաքականության մշտադիտարկում և գնահատումներ, մշակել երեխաների և երիտասարդների հետ աշխատանքի արդյունավետ ձևաչափեր, ինչպես նաև իրականացնել արդեն կիրառվող ձևաչափերի գնահատում: Միջոցիսցիպլինար մոտեցումը թույլ կտա մշտապես խորհրդատվություն ապահովել քաղաքականություն մշակողներին երեխայի տարիքից մինչև երիտասարդության տարիքի վերաբերյալ, ինչպես նաև ճշգրտել կրթական գործընթացների դերակատարումը այդ շրջանում ու օգնել գծագրել արդյունավետ ուղենիշային ճանապարհային քարտեզներ երեխաների և երիտասարդության զարգացման համար:

### Միջազգային փորձ

<p><a href="#">Գերմանական երիտասարդական ինստիտուտ (German Youth Institute)</a></p>	<p>Անկախ հետազոտական կենտրոն, 1963, Գերմանիա</p>	<p>Եվրոպայի սոցիալական գիտությունների հետազոտությունների ամենամեծ ինստիտուտներից մեկը: Երեխաների, երիտասարդների և ընտանիքների կյանքի իրավիճակները, խորհրդատվություն է տրամադրել կառավարությանը:</p>
<p><a href="#">Երիտասարդական հետազոտության կենտրոն (Youth Research Center)</a></p>	<p>Հոնկոնգ, Չինաստան</p>	<p>Վերջին 20 տարում 350 իրականացված հետազոտություն, որոնք նպաստում են երիտասարդական քաղաքականության մշակմանը և երիտասարդների համար նախատեսված ծառայությունների պլանավորմանը</p>

### Առաջարկում ենք՝

- Իրականացնել այս սցենարների գնահատում՝ ծախսարդյունավետության, սոցիալական ազդեցության տեսանկյուններից՝ **հանրային քննարկման սկզբունքով՝ երիտասարդների ակտիվ մասնակցությամբ՝ ընդ որում ինչպես Երևանի, այնպես էլ մարզերի:** Ինստիտուտը պատրաստ է ներդնել իր ջանքերը, կազմակերպել հարթակներ հանրային քննարկումների համար:
- Առաջարկում ենք **զարգացնել փաստարկված երիտասարդական քաղաքականության մեխանիզմները, ինչպես նաև ներդնել նոր և նորարարական մոտեցումներ, ինչին ևս Ինստիտուտը կարող է ակտիվորեն ներգրավվել,**

հատկապես որ վերջին 5 տարիներին հանդիսացել է միակ հետազոտական կենտրոնը՝ մասնագիտացած երիտասարդների հարցերի ուսումնասիրմամբ:

- Երիտասարդության զարգացման այլընտրանքային հիմք կարող է հանդիսանալ նաև այն հանգամանքը, որը այս տարի Ինստիտուտը իրականացրել է «Ստեղծարար տնտեսության մեջ երիտասարդների զբաղվածության ներուժը և զարգացման հեռանկարները» թեմայով հետազոտություն և մշակել է մի շարք առաջարկություններ թե՛ ոլորտի, և թե՛ ոլորտում երիտասարդների զբաղվածության բարելավման վերաբերյալ:

**Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտի թիմ**

**Հակիրճ տեղեկատվություն Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտի մասին**

**Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտը** հետազոտական անկախ կենտրոն է՝ ուղղված երիտասարդների վերաբերյալ խորքային մասնագիտական ուսումնասիրությունների իրականացմանը, փաստարկված երիտասարդական պետական քաղաքականության և ռազմավարության մշակման գործընթացների աջակցությանը, պետական քաղաքականությանը՝ երիտասարդների մասնակցության մեխանիզմների մշակմանը: Երիտասարդական ուսումնասիրություններով մասնագիտացած մեկ այլ կառույց Հայաստանում չկա:

**Ինստիտուտը ստեղծվել է 2013թ. ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի աջակցությամբ:** Հինգ տարիների ընթացքում իրականացրել ենք մի շարք հետազոտություններ: Ինստիտուտի կողմից իրականացրած հետազոտությունների հիման վրա մշակվել և իրականացվել են մի շարք ծրագրեր՝

- Երիտասարդների զբաղվածության մակարդակի բարձրացմանն ուղղված պետական ծրագրեր,
- Երիտասարդական աշխատողի ինստիտուտի կայացմանն ուղղված ծրագրեր,
- Երիտասարդական քաղաքականության մշակման գործընթացներ:

2013-2017թթ. երիտասարդական ռազմավարության մոնիթորինգի և գնահատման արդյունքների հիման վրա մշակվել է 2018-2022թթ. պետական երիտասարդական ռազմավարության նախագիծը: Գնահատման շրջանակներում Ինստիտուտը իրականացրել է մի շարք հանրային քննարկումներ՝ երիտասարդների ակտիվ մասնակցությամբ՝ Երևանում և մարզերում՝ դուրս բերելով երիտասարդների առաջնային կարիքները:

Երիտասարդական պետական քաղաքականության մոնիթորինգի և գնահատման այդ գործընթացը աննախադեպ է՝ քանի որ **անկախ փորձագետների միջոցով գնահատվել են պետական քաղաքականության արդյունքները, ինչին ակտիվորեն մասնակցել են երիտասարդները:** Արդյունքում մշակվել է ռազմավարության գնահատման նախնական մեթոդաբանություն, որը կարող է հետագայում հիմք հանդիսանալ առհասարակ ռազմավարության գնահատման օրինակելի մոդելի մշակման համար, ինչը կնպաստի երկրում պետական գործընթացների օպտիմալացման արագացմանը:

Կարևոր ենք համարում նշել մի քանի փաստ Ինստիտուտի մասին՝

- Թիմը բաղկացած է երիտասարդներից,
- Բացի հիմնական անձնակազմից, Ինստիտուտը բոլոր մարզերում ունի համակարգողներ,
- Ինստիտուտը ձևավորել է տեղական և միջազգային կառույցների հետ համագործակցային ակտիվ ցանց՝ «**ՂԻ ՎԻ ՎԻ Ինթերնեյշնլ**», «**ՄԱԿ-ի Զարգացման Ծրագիր**», **50-ից ավել երիտասարդական ՀԿ-ներ**, **ՀՀ վիճակագրական կոմիտե**, **The EU-CoE youth partnership**, **EvalYouth ECA** գնահատման մասնագետների ցանց:
- Ինստիտուտի թիմի անդամները անդամակցում են միջազգային հետազոտական ցանցերին: Ինստիտուտի տնօրեն Մարինա Գալստյանը 2017թ մարտից **Եվրոպական երիտասարդության հետազոտողների ցանցի անդամ է**, իսկ Ինստիտուտի վերլուծաբան Լիլիթ Ավդալյանը 2018թ-ից սկսած հանդիսանում է **Երիտասարդական քաղաքականության գիտելիքի եվրոպական կենտրոնի** ազգային թղթակից:

Ինստիտուտի գործունեության հաշվետվություններին առավել մանրամասն կարելի է ծանոթանալ կայքէջում՝ [www.ystudies.am](http://www.ystudies.am):

#### **Նախատեսվող միջոցառումները այս տարի՝**

- Երիտասարդության օրենքի ուսումնասիրություն տարբեր երկրներում,
- Երիտասարդության մասին օրենքի մշակմանը առաջարկությունների փաթեթի տրամադրում
- Երիտասարդների հետհեղափոխական տրամադրությունների ուսումնասիրություն
- Երիտասարդների սոցիալ-հոգեբանական վիճակի վերաբերյալ բացահայտումներ, առաջարկությունների փաթեթներ,
- Գնահատման մասնագետների համար միջազգային ծրագրի անցկացում Հայաստանում՝ Eval Youth ECA-ի, Հայաստանի Մոնիթորինգի և գնահատման սոցիալալոգիայի հետ համատեղ:

#### **Ինստիտուտի թիմի անդամների տեսլականը**

Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտի թիմի անդամները նրա ստեղծման առաջին օրվանից հավատացել են, որ գրագետ և չուղղորդված հետազոտական գործունեությունը պետք է հիմք հանդիսանա որոշումների կայացման համար և աջակցի երկրում երտասարդների կյանքի, երիտասարդներին տրամադրվող ծառայությունների և երիտասարդների օգնությամբ երկրի բարեկեցության բարելավմանը:

Այսօրվա համակարգի օպտիմալացումը երկրում երիտասարդական հետազոտություններով մասնագիտացած միակ կենտրոնի փակվելու հաշվին նշանակում է «Կերակրել մեր երեխաներին թոռների հաշվին» (Վերաձևակերպում Սերժ Թանկյանի հայտնի [մտքից](#)):